Պատկերացրու աշխարհը, որում մարդկության ողջ գիտելիքները ազատ հասանելի են յուրաքանչյուրին

Ջիմմի Ուոլես

Բարի գալուստ
Վիքիպեդիա

Վիքիպեդիան ամենամեծ հանրագիտարանն է աշխարհում: Այն ստեղծվում և պահպանվում է աշխարհով մեկ ավելի քան **1,4 միլիոն մասնակիցների** կողմից: Ամեն ամիս Վիքիպեդիայից օգտվում է **388 միլիոնից ավելի այցելու**: Վիքիպեդիայում հաշվվում է ավելի քան **20 միլիոն հոդված 260-ից ավելի լեզուներով**: Վիքիպեդիայից անվճար կարելի է օգտվել, այն կարելի է ազատ փոփոխել: Վիքիպեդիան զերծ է գովազդային նյութերից:

(2011թ դեկտեմբերի տվյալներ)

Ողջո՛ւյն: Իմ անունը Անի է: Միշտ, երբ ինչ-որ բանի մասին ավելին եմ ուզում իմանալ, օգտվում եմ Վիքիպեդիայից: Վերջերս հետաքրքրվեցի, իսկ ո՞վ է գրում հոդվածները: Ինչո՞ւ են հոդվածները երբեմն փոփոխվում: Ընթերցել եմ, որ ամեն ոք կարող է խմբագրել Վիքիպեդիան: Ե՞ս էլ: Ինչպե՞ս:

«Բարի գալուստ Վիքիպեդիա»-ն ընթերցելուց հետո դու կիմանաս.

- » Ինչպե՞ս է գործում Վիքիպեդիան
- » Ինչպե՞ս կարող ես գրանցվել Վիքիպեդիայում
- » Ինչպիսի՞ն է Վիքիպեդիայի մասնակցի ինտերֆեյսը
- » Վիքիպեդիայում ներդրումներ կատարելու տարբեր եղանակներ
- » Ինչպե՞ս համագործակցել մյուս մասնակիցների հետ՝ օգտվելով քննարկման էջերից
- » Ինչպե՞ս է ստեղծվում և զարգանում հոդվածը
- » Որո՞նք են հոդվածի որակի չափանիշները

Ինչպե՞ս է Վիքիպեդիան գործում

Վիքիպեդիայում ամեն ինչ գրված է քեզ նման մարդկանց կողմից: Այլապես այն չէր կարող դառնալ աշխարհի ամենամեծ առցանց հանրագիտարանը: Վիքիպեդիայում օրական մոտ 12.000 հոդված է ստեղծվում (30-ը հայերեն) և ամեն ամիս 4 միլիոնից ավելի խմբագրում է կատարվում:
(2011թ.դեկտեմբերի տվյալներ)

Շատ մասնակիցների («վիքիպեդիացիների») ոգեշնչում է յուրաքանչյուր մարդու անվճար գիտելիքներ ընձեռելու գաղափարը: Դա է պատճառը, որ նրանք կամավոր ժամանակ են հատկացնում պահպանելու և զարգացնելու Վիքիպեդիայի հոդվածների որակը, ինչպես նաև օգնելու նոր մասնակիցներին: Յուրաքանչյուրին թույլատրելով օգտվել, խմբագրել ու փոփոխել, Վիքիպեդիան գիտելիքների փոխանակման աննախադեպ հնարավորություններ է ստեղծում:

Բայց ո՞վ է որոշում ի՞նչը հայտնվի Վիքիպեդիայում: Ինչ-որ գլխավոր խմբագի՞ր:

Վիքիպեդիացիները այնքան նոր հոդվածներ են ստեղծում և եղած հոդվածներն այնքան հաճախ են խմբագրում, որ համարյա անհնար է այնպիսի մեծ խումբ ունենալ, որը կարողանա վերանայել և գնահատել հանրագիտարանում կատարված ամեն մի փոփոխություն: Վիքիպեդիան ստեղծվում և վերահսկվում է իր իսկ ընթերցողների կողմից:

Վիքիպեդիայի բարելավմանը մասնակցող մարդկանց մեծ մասն այն համարում են ժամանց և հաճելի զբաղմունք: Թեև սոցիալական ասպեկտը աշխատում է ժամանցի ուղղության վրա, սակայն ակտիվ մասնակիցներին առաջ է մղում ազատ գիտելիքներն աշխարհով մեկ տարածելու ձգտումը:



Անվճար բովանդակությունը, աշխարհով մեկ, յուրաքանչյուրին հասանելի դարձնելը ինձ համար մեծ նշանակություն ունի: Ինձ ավելի մանրամասն պատմիր: Որտեղի՞ց կարող եմ սկսել:

Փորձի՛ր

Ո՞վ կարող է խմբագրել Վիքիպեդիայում առկա հոդվածները: Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

- ☐ Միայն փորձառու խմբագիրները
- ☐ Վիքիպեդիայի գլխավոր խմբագիրը
- ☐ Ամեն ոք, ում ինտերնետը հասանելի է

Այս հարցի և մյուս վիկտորինաների պատասխանները կգտնես այս տեղեկատվական ուղեցույցի վերջում:

Ստեղծել մասնակցային հաշիվ

Մասնակցային հաշիվ ստեղծելը Վիքիպեդիայում ներդրումներ կատարելու առաջին քայլն է: Մասնակցային հաշիվը թույլ է տալիս ստեղծել նոր հոդվածներ (էջեր), պատկերներ բեռնել և անվանափոխել առկա էջերը: Բացի այդ, հասանելի են դառնում հատուկ գործիքներ, ինչպես, օրինակ, Իմ հսկացանկը: Հսկացանկը թույլ է տալիս հետևել քո կողմից խմբագրված հոդվածներին և առանձնացնել քեզ հետաքրքրող այլ էջեր:

Մասնակցային հաշիվ ունենալն օգնում է շփվել մյուս մասնակիցների հետ, ովքեր նույն հոդվածներն են խմբագրում և օգնում քեզ դառնալ համայնքի վստահելի անդամ: Վիքիպեդիային ընտելանալուց հետո դու կբացահայտես, որ շատ խնդիրներ կան քննարկելու և որ դու ևս կարող ես օգնել այլ մասնակիցների:

Խմբագրումներ անել կարելի է նաև առանց մասնակցային հաշիվ ունենալու: Այդ դեպքում խմբագրումներն անանուն են և վերագրվում են քո կոմպյուտերի IP հասցեին: Վիքիպեդիայի համայնքը հակված է չվստահել IP հասցեների խմբագրումներին, հատկապես, եթե դրանք դպրոցի կամ ձեռնարկության ցանցից են կատարվում, որտեղ չգրանցված օգտվողը կարող է խմբագրել շահից ելնելով: Օրինակ, երբ աշակերտը կամ ուսանողը խմբագրումներ է կատարում՝ գովասանքներ տեղադրելով իր դպրոցի կամ համալսարանի մասին:

Վիքիպեդիայի մասնակցային հաշիվ ստեղծելը հեշտ է և քեզանից անձնական տեղեկություններ չի պահանջում.

1. Սեղմիր «Մտնել/Գրանցվել» լինքի վրա էջի վերևի աջ անկյունում
2. Ընտրիր ծածկանուն
3. Ընտրիր գաղտնաբառ
4. Սեղմիր Ստեղծել մասնակցային հաշիվ կոճակի վրա:

Փորձի՛ր

1. Ստեղծիր Վիքիպեդիայի **Մասնակցային հաշիվ**
2. Ստեղծիր քեզ դուր եկած հոդվածներից քո հսկացանկը՝ հոդվածի էջի վերևի աստղի վրա սեղմելով: Ուսումնասիրի՛ր, ինչպես են հոդվածում կատարված փոփոխությունները գրանցվում քո հսկացանկում:

Արագ ստացվեց: Այժմ ես արդեն մասնակցային հաշիվ ունեմ և կարող եմ մասնակցել որակյալ հոդվածներ ստեղծելուն:

Վիքիպեդիա մասնակցի ինտերֆեյս

Վիքիպեդիա, **Գլխավոր էջ**:

Քննարկումը երևում է յուրաքանչյուր հոդվածի գլխավերևում: Քննարկումն այն տեղն է, որտեղ դու և այլ մասնակիցներ կազմում եք հոդվածի կառուցվածքը, քննարկում և համաձայնության գալիս հոդվածի բովանդակության վերաբերյալ և օգնություն խնդրում մեկդ մյուսից:

Վերջին փոփոխությունները ցույց են տալիս Վիքիպեդիայի բոլոր հոդվածնե-րում կատարված խմբագրումների ժամանակագրությունը: Սա քեզ հնարավորություն է տալիս դիտանցել՝ հոդվածները զերծ պահելու համար սխալներից և վանդալիզմից;

Օգնությունը հնարավորություն է ընձեռում Վիքիպեդիայի աշխատանքը ավելի լավ պատկերացնել:

Վիքիպեդիան բաղկացած է ավելի քան **260 լեզուներից**:

Ո՞վ է գրել այս հոդվածը: Իսկապես լավն է: Համոզված չեմ, որ ես կարող եմ այսքան լավ հոդված գրել:

Վերևի աջ անկյան՝ **Ստեղծել մասնակցային հաշիվ** պատուհանը Վիքիպեդիայի բոլոր հնարավորությունները քեզ հասանելի է դարձնում և օգնում է ստեղծել քո առցանց կերպարը:



Դիտել պատմությունը պատուհանը քեզ հնարավորություն է տալիս դիտել և համեմատել էջի անցյալ տարբերակները:

Որոնել պատուհանը գտնում է քո հարցմանը համապատասխանող հոդվածը: Եթե այդպիսի հոդված գոյություն չունի, ապա ցույց է տալիս այն հոդվածները, որոնցում այդ բառ(եր)ը հանդիպում է:

1. Սեղմի՛ր **Վերջին փոփոխություններ** պատուհանի վրա որևէ հոդվածի համար և ուսումնասիրիր էջը: Ուշադրություն դարձրու, թե ինչպես է յուրաքանչյուր խմբագրում գրանցված ժամանակացույցով և կցված կոնկրետ մասնակցին կամ IP հասցեին: Տես ինչպե՞ս են որոշ մասնակիցներ բացատրում իրենց ուղղումները: Խմբագրման բացատրությունը լավ պրակտիկա է, քանի որ այն օգնում է ուրիշներին հասկանալ քո խմբագրումը:

2. Անիի ընկեր Արան նոր է սկսել խմբագրել: Նա ուզում է ծանոթանալ Վիքիպեդիայի կանոնակարգերին և ուղեցույցերին: Որտե՞ղ կարող է օժանդակություն գտնել:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը

- ☐ Վերջին փոփոխություններ
- ☐ Օգնություն
- ☐ Փնտրել

Ինչպես կարող եմ մասնակցել

Գիտե՞ս, որ Վիքիպեդիայում մասնակցելու շատ տարբեր ձևեր կան: Գրելը բազմաթիվ գործողություններից մեկն է: Այստեղ բերված են մասնակցության ձևերից մի քանիսը և թե ի՞նչ են նրանք անում:

Վիքիթզուկ. չնչին խմբագրումներ է անում, օրինակ, ուղղագրական սխալներ: Կտտացնելով հոդվածի քննարկման էջի վրա՝ հեղինակներին հաղորդագրություններ թողնելով, առաջարկում է հոդվածների բարելավում:

Սրբագրող. բարելավում է հոդվածի քերականությունը և ուղղագրությունը:

Հետևող. դիտանցում է հոդվածները՝ կողմնակալ խմբագրումներն ուղղելու նպատակով: Նա հետևում է մասնակիցների կողմից անձնական, քաղաքական և փիլիսոփայական տեսանկյունից արված փոփոխություններին և ապահովում է հոդվածների փաստացի ճշգրտությունը:

Միջնորդ. հակասող տարբերակներով հոդվածներում հարթեցնում է քննարկումը, օգնում է վեճերը լուծել և մասնակցին վարքագծի վերաբերյալ խորհուրդներ է տալիս:

Պատկերազարդող. պատկերներ, լուսանկարներ, քարտեզներ և հոդվածին վերաբերող այլ արտահայտչամիջոցներ է ներբեռնում:

Ձևավորող. վիքի վերանշումից օգտվելով, կառուցվածք է տալիս կամ վիքիֆիկացնում է հոդվածները, այնպես որ նրանք ավելի ընթեռնելի են դառնում:

Հեղինակ. հոդվածներին տեղեկություններ է ավելացնում գրքերից, վեբկայքերից, թերթերից և այլ հուսալի աղբյուրներից: Հեղինակը նաև նոր հոդված է սկսում:

Հենց նոր Լահորի (քաղաք Պակիստանում) պատմական փաստի վերաբերյալ ես ուղղում արեցի և ի՞նչ, գուշակի՛ր: Իմ խմբագրումները կենդանացան հենց որ էջը հիշեցի: Հոյակա՛պ է:

Մասնակցի էջ և իմ քննարկման էջ

Հազարավոր մասնակիցներ կան, ովքեր ամեն օր խմբագրում են Վիքիպեդիան: Որոշ խմբագրումներ ստուգելի չեն կամ արվել են բարելավման հեռանկարով: Դա է պատճառը, որ որոշ վիքիպեդիացիներ մշտապես դիտանցում են բոլոր խմբագրումները՝ օգտվելով (ձախ վահանակի մասնակցել պատուհանի տակ գտնվող) Վերջին փոփոխություններից: Այս հատկությունը հնարավորություն է ընձեռնում հսկել Վիքիպեդիայի կոնկրետ լեզվի տարբերակում կատարված բոլոր փոփոխությունները: Քանի որ որոշ վիքիպեդիացիներ դիտանցում են ահռելի քանակությամբ խմբագրումներ, նրանք կարող են երբեմն ջնջել խմբագրումը, որը ճիշտ է, բայց լավ չի գրված: Դրանից խուսափելու համար կարևոր է, որ դու գրես հավաստի տեղեկատվություն և վստահելի աղբյուրների վրա հղում կատարես:

Մասնակցի էջում ավելացրու տեղեկատվություն քո և քո հետաքրքրությունների մասին: Մասնակցային էջ ունենալը, վստահություն ստեղծելու և քո խմբագրումներին հավաստիություն ընձեռնելու լավագույն ճանապարհն է: Յուրաքանչյուր մասնակցային հաշիվ ունի իր Մասնակցի էջը և Մասնակցի քննարկման էջը:

Ի՞նչ պատահեց: Հոդվածում կատարած իմ խմբագրումը կորավ: Ի՞նչ որ մեկը այն հեռացրեց: Ի՞նչու:

Փորձի՛ր

Անին սիրում է լուսանկարել իր այցելած վայրերը: Եթե նա իր լուսանկարները բեռնում է Վիքիպեդիա, ապա նա՝

- ☐ պատկերազարդող է
- ☐ հեղինակ է
- ☐ միջնորդ է
- ☐ ձևավորող է

Քո Մասնակցային էջում կարող ես գրել քո հետաքրքրությունների և գիտելիքների մասին: Շատ մասնակիցներ նշում են նաև, թե ինչ լեզուների են տիրապետում, ինչ նախասիրություններ ունեն և երբվանից են ներդրումներ կատարում: Որոշ մասնակիցներ նշում են իրենց իրական անունը և այլ անձնական տվյալներ, մյուսները նախընտրում են դա չանել:

Իմ Քննարկումները այն էջն է, որտեղ այլ մասնակիցներ կարող են քեզ հաղորդագրություններ թողնել, իսկ դու կարող ես պատասխանել: Շատ մասնակիցներ Բարի գալուստ հաղորդագրություն են թողնում նորեկներին: Ուրիշները կարող են այդ տեղն օգտագործել զրույց սկսելու, քեզ ճանաչելու կամ քո խմբագրումները ավելի լավ հասկանալու համար:

Յուրաքանչյուր հոդված ևս ունի քննարկման էջ: Այս էջը վիքիպեդիացիների կողմից օգտագործվում է համագործակցելու, հոդվածի բովանդակությունը քննարկելու և տարաձայնություն-ները հարթելու համար: Եթե որևէ մեկին հետաքրքրում է, թե ինչո՞ւ ես խմբագրում կատարել կամ ուզում է քեզ ուրիշ հոդված առաջարկել, կարող է օգտվել հոդվածների քննարկման էջից: Հոդվածի քննարկման էջը հարմար է նաև հոդվածի զարգացման նպատակով օգնություն խնդրելու համար:

Փորձի՛ր

Սեղմիր քո ծածկանվան վրա, ապա **խմբագրել**, որպեսզի խմբագրես քո մասնակցային էջը:

Փորձարկիր խմբագրման վահանակի գործիքները:

B **(թավ)** **I** **(շեղ)** **(լինք)**

Սեղմիր **ընդլայնված** լինքի վրա վրա՝ վիքի-ձևավորման գործիքները տեսնելու համար:

Վիկի-ձևավորման՝ արագ տեղեկատուն հասանելի է այս ուղեցույցի վերջում:

Հիշի՛ր, ընդհանուր խնդիրները և նոր առաջարկները Վիքիպեդիայի համայնքը քննարկում է «Խորհրդարան» էջում:

Օհ, ինչ որ մեկը գրառում է թողել իմ էջում: Նա ասում է, որ իմ խմբագրումը հետ է շրջվել, որովհետև աղբյուրներ չեմ նշել: Տեղեկությունները քաղել էի կառավարության կայքից, ուստի նորից կխմբագրեմ՝ այս անգամ աղբյուրը կնշեմ ծանոթագրության տեսքով:

Հոդվածի կյանքը

Չնայած Վիքիպեդիայի հոդվածները պետք է լինեն մանրամասն և լավ գրված, ոչ ոք չի ակնկալում, որ մի մոտեցմամբ համալիր, համապարփակ հոդված կգրվի: Սովորաբար հոդվածները սկսվում են փոքրից և լայն համագործակցության միջոցով հասունանում են, հաճախ հետևյալ շաբլոնի նման:

- Ամենահաջող հոդվածները սկսվում են փոքրից և բաղկացած են՝ թեմայի սեղմագրից (ամփոփագիր), թեմայի կարևորության նշումից («առաջինը...», «ամենամեծը...», «...ի մայրաքաղաքը» և այլն) և Վիքիպեդիայից դուրս աղբյուրից, որը հաստատում է թեմայի առկայությունը և կարևորությունը (հավաստի աղբյուր կամ կայք): Այս սկզբնական հոդվածը կոչվում է կոճղ: Եթե երեք բաղադրիչներից մեկը բացակայում է, համայնքը կարող է համարել, որ թեման կարևոր չէ և հոդվածը ջնջել:

- Քանի որ այլ մասնակիցներ հոդվածին ավելացնում են տեքստ և պատկերներ, այն թեմատիկ սղագրությունից վերածվում է ավելի մանրամասն հոդվածի, որը վերաճում է բազմաբնույթ՝ պատմական (օրինակ, «1923-ին, նոր փաստեր...») կամ գլոբալ (օրինակ, «Եվրոպայում, սա դիտարկվում էր ինչպես...») և այլն, նկարագրի: Առավել ակտիվ մասնակիցները իրենց հոդվածները կարող են առաջարկել Վիքիպեդիայի փորձագետների գնահատմանը: Գնահատման գործընթացը ենթադրում է հոդվածի մակարդակի մանրակրկիտ ուսումնասիրություն մեծ թվով վիքիպեդիացիների կողմից: Գործընթացը կիրառվում է ծավալուն խմբագրում անցած հոդվածների նկատմամբ: Դիտարկման ընթացքը ենթադրում է բացատրությունների, հարցերի և առաջարկների տարափ փորձագետների կողմից: Հետադարձ կապի միջոցով հոդված գրողները կառուցում են զարգացման ռազմավարություն՝օգտագործելով հոդվածի Քննարկման էջը:

Ի վերջո հոդվածը այնպիսի մակարդակի է հասնում՝ այն լավ է գրված, աղբյուրներից է վերցված և համապարփակ է, այնպես որ միայն էքսպերտները կարող են բարձրացնել նրա արժեքը: Այսպիսիք կարող են առաջարկվել որպես լավ հոդվածներ: Միայն քիչ թվով հոդվածներ համայնքի կողմից կարող են ճանաչվել որպես բարձրակարգ: Նրանք կազմում են հաջողված հոդվածների ցանկը: Հաջողված հոդվածները ցուցադրվում են Վիքիպեդիայի գլխավոր էջում: Բավականաչափ ջանք և ժամանակ է պահանջվում բարձրակարգ հոդված գրելու համար: Հոդված ստեղծելիս համագործակցությունը խրախուսվում է և բարձրացնում է քո կարգավիճակը Վիքիպեդիայի համայնքում: Մնացած բոլոր հոդվածների նման, հաջողվածները նույնպես շարունակում են մնալ խմբագրման ենթակա:

Ես երազում եմ միլիոնավոր կարդացողներ ունեցող վեբ կայքի գլխավոր էջի վրա հայտնված հոդվածին մասնակցություն ունենալու մասին:

Փորձի՛ր

Ովքե՞ր են վերահսկում հոդվածների որակը:

- [ ] Վիքիպեդիայի մասնակիցներն իրենք
- [ ] Մասնագետները
- [ ] Միքիմեդիա հիմնադրամը

Ինչն է հոդվածը որակյալ դարձնում

Վիքիպեդիայի հոդվածի որակը արդյունք է լավ կազմված կառուցվածքի, հանրագիտարանային բովանդակության և ակտիվ համայնքի:

Կառուցվածք. Հոդվածի հստակ կառուցվածքը՝ օգնում է ընթերցողներին՝ հեշտ գտնել տեղեկությունը և օժանդակում է խմբագիրներին՝ թեման բոլոր տեսանկյուններից լավ դասավորված պահել: Կառուցվածքը յուրացնելու ճանապարհներից մեկը հաջողված հոդվածները, Վիքիպեդիայի լավագույն հոդվածներն ուսումնասիրելն է: Դու կարող ես գտնել Վիքիպեդիայի հաջողված հոդվածները Վիքիպեդիայի գլխավոր էջում: Այսօրվա հաջողված հոդվածների ներքևում սեղմիր՝ ավելի հաջողված հոդվածներ: Այնուհետ, բովանդակությունների վրայով անցնելով, ընտրիր քեզ հետաքրքրող թեման:
Ամենաորակյալ հոդվածներն ունեն հետևյալ կառուցվածքը:

Ներածական հատվածը ընդհանրացնում է հոդվածում տեղ գտած գլխավոր խնդիրները: Նշենք, որ առաջնորդող հատվածը վերնագիր չունի:

Բուն տեքստը հետևում է առաջնորդող հատվածին, որը պարունակում է հատուկ վերնագրեր և ենթավերնագրեր: Աշխարհագրական տեղանքը, օրինակ, կարող է ունենալ հետևյալ վերնագրերը՝ պատմություն, աշխարհագրություն, կլիմա, տնտեսություն, հասարակական կառավարում, դեմոգրաֆիա և մշակույթ:

Լրացումներն ու ծանոթագրությունները հետևում են հոդվածի տեքստին: Դրանք կարող են ներառել բիբլիոգրաֆիկ հղումներ, կապ դեպի Վիքիպեդիայի այլ հոդվածներ, ինչպես նաև համապատասխան հրապարակումներ, վեբ կայքեր:

Փորձի՛ր:

1. Հոդվածի տեքստը վերնագրեր չունի: Ընտրիր ճիշտ պատասխանը:
   - ☐ Ճիշտ է
   - ☐ Սխալ է

2. Որակյալ հոդվածը ի՞նչ կողմեր պետք է ունենա: Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:
   - ☐ Հավաստի աղբյուրներ
   - ☐ Չեզոք տեսակետ
   - ☐ Ինչպե՞ս անել ուղեցույց
   - ☐ Ամփոփագիր, բուն տեքստ, հղումներ

Բովանդակություն՝ շատ Վիքիպեդիացիներ հոդվածի որակը գնահատելիս բովանդակությունը համարում են ամենակարևոր գործոնը: Կայուն որակ ապահովելու համար Վիքիպեդիայի համայնքը ստեղծել է հետևյալ չորս ուղղորդող սկզբունքները:

- **Աղբյուրների ապահովում՝** մասնակիցները խրախուսվում են լրացուցիչ ինֆորմացիայի աղբյուրներ ներկայացնելու համար: Յուրաքանչյուր փաստ պետք է ստուգելի լինի հավաստի աղբյուրի կողմից:
- **Չեզոք տեսակետ՝** հոդվածները պետք է գրված լինեն ազնիվ, անկողմնակալ և ներկայացնեն արդեն հրատարակված արժանահիշատակ տեսակետներ:
- **Գովազդից զուրկ հոդվածներ՝** գովազդային նյութերը, ինքնագովազդային տվյալները, ուղեցույցները, վաճառքի կատալոգները Վիքիպեդիայում տեղ չունեն:
- **Հատուկ հետազոտությունների բացակայություն՝** Վիքիպեդիայում քո նոր գաղափարները առարկայի մասին նպատակահարմար չէ ընդգրկել (Վիքիպեդիայում դա կոչվում է հատուկ տեսակետ):

Համայնք՝ Վիքիպեդիայում կատարված բոլոր ներդրումները ազատ են հանրության համար: Դա նշանակում է՝ որևէ խմբագիր որևէ հոդված չի կարող յուրացնել: Բոլոր ներդրումները կարող են և եռանդուն խմբագրվել բազմաթիվ մասնակիցների կողմից:

Այլ կերպ ասած, յուրաքանչյուրը կարող է միանալ որոշումներ ընդունելու գործընթացին: Համայնքը նույնպես օգտագործում է քննարկումները՝ համաձայնեցնելու համար հոդվածի բովանդակային կառուցվածքը: Այն դեպքերում, երբ կոնսենսուսի դժվար է հասնել, փնտրիր տարբերակներ **Օգնություն > Վիքիպեդիա հանրությունում**: Որոշ խմբագիրներ, ովքեր Վիքիպեդիայում տարիների փորձ ունեն, կարող են օգտակար լինել կոնֆլիկտները հարթելու համար:

Նոր հոդված ստեղծել

Շատ թեմաներ կան, որոնց վերաբերյալ հոդվածներ չկան Վիքիպեդիայում:
Եթե դու կարծում ես, որ թեման բացակայում է Վիքիպեդիայում, փնտրիր թեմայի անվան տարբերակներ: Օրինակ, փորձիր փնտրել տարբեր ուղղագրությամբ: Ինչպես նաև ստուգիր, արդյոք թեման չի հիշատակվում նրան առընչվող հոդվածներում: Օրինակ, կղզին կարող է հիշատակվել նրա վրա գտնվող երկրների մասին հոդվածներում:
Փնտրիր հոդվածի վերնագիրը: Եթե հոդվածը գոյություն չունի, դու հոդվածի անունը կտեսնես կարմիր հիպերլինքով: Սեղմիր հիպերլինքի վրա՝ նոր հոդված խմբագրելու համար:
Քո նոր հոդվածը լավ սկիզբ կունենա, եթե դու չմոռանաս ապահովել հետևյալ երեք տարրերը

1. Թեմայի ամփոփագիր
2. Թեմայի կարևորության պատճառը
3. Վստահելի աղբյուրներ

Իմ առաջին հոդվածը Վիքիպեդիայում այժմ առցանց է: Հետաքրքիր է տեսնել՝ ինչպե՞ս է համայնքն այն զարգացնելու:

Երբ դու սկսես քո հոդվածը, քեզ փորձադաշտ հարկավոր կլինի: Ստեղծիր քո սեփական փորձադաշտը կամ սևագրության էջը, որտեղ կարող ես խմբագրել հոդվածը, մինչ այն կունենա վերոնշյալ երեք տարրերը:

Քո սևագրության էջը ստեղծելու համար՝ գնաՄասնակցի էջ> Սեղմիր՛խմբագրում>Գրի՛ր[[Մասնակից:<Քո մասնակցի անունը>/Սևագրություն]] > Հիշել էջը > Սեղմի՛ր հենց նոր ստեղծած լինքի վրա: Այժմ դու քո ավազարկղում ես:

Օգտագործիր ավազարկղը քո հոդվածը գրելու համար: Խմբագրումը ավարտելուց հետո չմոռանաս սեղմել հիշել էջը պատուհանի վրա: Երբ արդեն պատրաստ ես, գտիր մի այլ խմբագիր, ով թեմայով կարող է հետաքրքրված լինել: Խմբագիր գտնելու տարբերակ է նման թեմայով հոդվածի Դիտել պատմությունը աղյուսակում նայելը: Այդ խմբագրի քննարկման էջում հաղորդագրություն թող՝ քո հոդվածը դիտանցելու խնդրանքով: Երբ պատրաստ կլինես, ավազարկղից քո հոդվածի բովանդակությունը պատճենիր՝ գնա քո ընտրած թեմայի անվան վրա, սեղմիր Խմբագրում, տեղադրիր բովանդակությունը և հիշիր էջը: Հիմա, երբ դու ստեղծել ես նոր հոդված, այստեղ կանգ մի առ: Հղիր քո հոդվածը այլ հոդվածների, որտեղ քո թեման հիշատակվում է:

Փորձի՛ր

Ի՞նչ կողմեր պետք է ունենա որակյալ հոդվածը:

- ☐ Հավաստի աղբյուրներ
- ☐ Չեզոք տեսակետ
- ☐ Ամփոփում, բուն նյութ և հղումներ

Մի վիքի-խմբագրող



Հիանալի է, հաջորդ ամիս ուղևորվելու եմ Մարոկո: Կօգտվեմ Վիքիպեդիայի **գիրք ստեղծելու** ֆունկցիայից: Կհավաքեմ ինձ անհրաժեշտ հոդվածները և կտպեմ անձնական ուղեցույցի տեսքով: Վիքիպեդիան շատ ավելի հնարավորություններ ունի, քան ես սկզբում կարծում էի:

Այժմ երբ ընթերցել ես «Բարի գալուստ Վիքիպեդիան», կարող ես

- » Հասկանալ՝ ինչպե՞ս է գործում Վիքիպեդիան
- » Ստեղծել մասնակցային հաշիվ
- » Հասկանալ Վիքիպեդիայի մասնակցային ինտերֆեյսը
- » Թվարկել Վիքիպեդիան համալրելու տարբեր եղանակներ
- » Շփվել այլ մասնակիցների հետ քո մասնակցի քննարկման էջում
- » Բացատրել՝ ինչպե՞ս է հոդվածն ստեղծվում և զարգանում
- » Նկարագրել հոդվածի որակի չափանիշները

Լավ, ժամանակն իրոք թռչում է: Այսօր սեղմեցի էջի վերևում՝ Իմ ներդրումը լինքի վրա ու պարզվեց, որ արդեն 100 խմբագրում եմ կատարել: Այս ընթացքում ես այնքան հետաքրքիր բաներ իմացա, ծանոթացա այլ վիքիպեդիացիների հետ, որոնց հետ միասին արդեն մի քանի նոր հոդվածներ ստեղծեցի:

Այս կրթական նյութերը բերված են Վիքիմեդիա գրապահարան նախագծից: Բարի գալուստ Վիքիպեդիա էլեկտրոնային տարբերակը և այլ Գրապահարանային նյութեր բեռնելու համար, այցելիր՝ **http://bookshelf.wikimedia.org**:

Այնտեղ են գտնվում նաև սկզբնական ֆայլերը, որոնք քեզ թույլ են տալիս թարգմանել, հարմարեցնել և բազմացնել Գրապահարանի նյութերը:

Փորձի՛ր (պատասխաններ):

Ինչպե՞ս է Վիքիպեդիան աշխատում:
Ո՞վ կարող է խմբագրել Վիքիպեդիան:

- ☑ Յուրաքանչյուրը՝ ում Ինտերնետը հասանելի է:

Վիքիպեդիայի մասնակիցների ինտերֆեյս:
Անիի ընկեր Արան նոր է սկսել խմբագրել և գտնում է, որ ինքը Վիքիպեդիայի քաղաքականության և ուղեցույցի, համայնքի չափանիշների, և առհասարակ ընդհանուր օգնության կարիք ունի: Որտեղ նա օգնություն կգտնի:

- ☑ Օգնություն

Ինչպե՞ս կարող եմ մասնակցել:
Անին սիրում է նկարել այն վայրերը, ուր նա այցելում է: Անին կարող է օգնել Վիքիպեդիային որպես՝

- ☑ պատկերազարդող

Հոդվածի կյանքը:
Ովքե՞ր են վերահսկում հոդվածների որակը

- ☑ Վիքիպեդիայի մասնակիցներն իրենք

Ի՞նչն է հոդվածը դարձնում որակյալ:

1. Հոդվածի բուն տեքստը վերնագրեր չունի:

- ☑ Սխալ է

Որակյալ հոդվածը ի՞նչ կողմեր պետք է ունենա:

- ☑ Հավաստի աղբյուրներ
- ☑ Չեզոք տեսակետ
- ☑ Ամփոփագիր, բուն նյութը և հղումներ

Ստեղծել նոր հոդված
Ի՞նչ երեք տարրեր պետք է պարունակի քո նոր հոդվածը:

- ☑ Ամփոփագիր, կարևորություն և աղբյուրներ

Արդյո՞ք դու այն 12 միլիոն մարդկանցից ես, ով Վիքիպեդիան օգտագործում են ամեն օր:

Ամեն օր մարդիկ աշխարհով մեկ օգտվում են Վիքիպեդիայից՝ օգնելու համար դպրոցական ծրագրերին, բիզնես պլաններին, անձնական հետազոտություններին, ճամփորդություն պլանավորելու համար: Նրանք այն օգտագործում են նոր գաղափարներ ծնելու և հիմնադրույթներ հայտնագործելու համար: Նրանք օգտվում են հեռավոր երկրներ, հնագույն մշակույթներ, կերպարվեստ, հասարակական գործիչներին և վերջին իրադարձությունները ուսումնասիրելու համար:

Բարի գալուստ Վիքիպեդիան տեղեկատվական ուղեցույց է յուրաքանչյուրի համար, ով ուզում է հաջորդ քայլն անել՝օգնել հավաքել և տարածել ողջ մարդկության գիտելիքները:

Հետևիր Անիի օրինակին, ինչպես է նա Վիքիպեդիայում իր առաջին խմբագրումներն անում: Ընթացքում դու կսովորես Վիքիպեդիայի հասկացությունները, սկզբունքները, տեղեկատվությունը և գործիքները, որպեսզի կարողանաս Վիքիպեդիայում քո մասնակցությունն ունենալ:

Wikimedia Foundation%
149 New Montgomery Street, 3rd Floor
San Francisco, CA 94105 USA

The Wikimedia Foundation is a non-profit charitable organization that runs Wikipedia and other freely licensed websites.

WIKIMEDIA
FOUNDATION